

հի, կ'ըսէ, որ սովու նշան է, երբ տրեգական սրածուլթեան:

Ի հարկէ ցաւալի է, որ տակաւին մարդկութեան խիստ մեծագոյն մասը այսպիսի խօլական յիմարութեամբ կը տառապի. ցաւալի է, որ տակաւին բրիտանեական կրօնը չ'է ունեցած սրտերու և մտքերու վերայ այն փրկարար ազդեցութիւնը, որով խալսու կ'անկանին կը փշրին ամեն նախապաշարմանց անհիմն ամբարտակներն:

Այս օրինակ նախապաշարութեան հեթանոսական են, որովհետեւ աստուղանայական խաբեբայ արուեստին արդիւնք են, որ Քրիստոնէութեան շատ դարեր յառաջ Քաղդէացեաց մէջ ծաղկած էր եւ այս ամբարիշտ արուեստին հետեւողք կը յանդգնէին աստղերով հանդերձեալը գուշակել և ապագայ պատահարք ըստ զանազան դրից և երեւութից մօլորակաց: Ս. Գիրքը միշտ կը կշտամբէ այս արուեստին ստութիւնը և խաբէութիւնը: Նոյնպէս պարտաւոր են մեր Եկեղեցական հարք այս հեթանոսական նախապաշարմանց դէմ, որք անարգանք են աստուածային բարութեան և նախախնամութեան և մանաւանդ նուաստացուցիչ բրիտանեական ոգւոյն, զինիչ Ս. Աւետարանի զէնքերով: Պարտաւոր են նոքա փոխանակ անձնասիրութեամբ ժողովուրդը երկպառակելու, նորա բարոյական յառաջադիմութեան նպաստիչ. փոխանակ առաջնորդական անվերջանալի խնդիրներով գաւառները խռովելու, Աւետարանի կենաց խօսքով մոխրութիւն խեղճ ժողովուրդը, որ շատ տեղ ծաղկացնէ տգիտութեամբ բաղդի եւ ճակատագրի կը հաւատայ. շատ տեղ անմխիթար կը յուսահատի եւ շատ տեղ հմայական պատրանքներով իւր յաջողութիւնը կամ ձախորդութիւնը

կը կշռէ ի նախատինս Քրիստոնէական կրօնի, եւ անշուշտ այս մասին մեծ պատասխանատուութեան ենթակոյ են Աւետարանի պաշտօնակց:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ս. մոյս 11 ին քաղաքիս մէջ մեռաւ Տէք անուն Անգղիացի երեւելի ճարտարապետն յետ միամենաց հիւանդութեան: Սոյն անձը Անգղիոյ տէրութեան կողմէն ղրկուած էր այս կողմերը հնութիւններ հետախուզելու: Կ'ըսուի թէ քաղաքիս արեւելեան կողմը գտնուած ժամանակ՝ արեգական տապէն կը վնասուի և այն կը լինի պատճառ իւր մահառիթ հիւանդութեան:

— 13. Օգոստոսիառ Կոյսեր գահակալութեան տարեդարձը չքեղ ճըրագավառութեամբ կատարուեցաւ: Նոյն օրը քաղաքիս բոլոր Հիւպատոսք ինչպէս մեր և Յունաց Ս. Պատրիարքունք Կաթալարութեան պալատը շնորհաւորութեան գնացին:

— 14. Յուլիէի մէջ հետեւեալ եղեռնագործութիւնը տեղի ունեցած է: Քաղաքին արեւելեան դրան առջեւ եղած գինեվաճառի խանութներուն մէկ խանութարանը չորս տեղէ վիրաւորեալ գտնուեցաւ. վերքերը գէշ են և ազատութեան յոյս չը կայ: Առաւօտուն վիրաւորեալը դադարի մէջ գնելով Յունաց վանք տարած են, որովհետեւ յունագաւան և Յունաստանցի եղած է զարնուածը: Ոճրագործը տակաւին չէ գտնուած:

— 21. Տեղս հասաւ Ռուսաց նախկին Հիւպատոս Պ. Բաժէմիքով, որ ամսէ մը ի վեր Պոլիս կը գտնուէր:

կըտուի լծել մօտերո իւր ընտանեօր
բոլորովին պիտի մեկնի քաղաքէս, ու
բաժնեաւ արգէն իւր յաջորդը եկած է:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱԿԱՆ, ԲԱՂԱԲԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Ի

Գ. Ս. ԻԱՂԱՅԵԱՆԷ

ՅԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒԹՏԷ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՅ

Կը վաճառուի յերուսաղէմ՝ և ՚ի
Պօլիս ՚ի Փսիսանորդարան:

Գին 7 Դահեկան:

Այն հրատարակութեան վերայ փոք-
րիկ ծանօթութի մի տարու համար ար-
ժան կը համարիմք դասագրքին հետեւ
եւալ ԱԶԳԸ հրատարակել:

“Ներքից Համառօտ Աշխարհագր-
ութիւնը պատրաստեցինք նորավար-
ժից համար ուղեցոյց ունենալով մեզ
լատ քաղաքական նոր փոփոխմանց և
աշխարհագրական նորագոյն գիտելեաց
՚ի վերջին ժամանակս հրատարակուած
Գաղղեարէն ընտիր դատագրքերն:

Դասաւորութեան մասին պատշաճ
գատեցինք ընդհանրապէս նոր ընդու-
նուած եղանակին հետեւիլ, նախ Բը-
նական մասն գնելով, ապա Քաղաքա-
կանն և ՚ի վերջոյ Ուսումնականն:

Այն դասաւորութեան գլխաւոր
օգուտն այն է, որ երկրագնախ բնա-
կան նկարագիրը աշխարհագրական
ուսման սէր և հետաքրքրութիւն կը
զարթուցանէ նորավարժից մէջ. զխա-
ւոր լերանց շղթայից ու զղութիւնը ա-

ւելի զուարճութիւն կը տայ, քան Քա-
ղաքական մասն ուղեւթեանց և քա-
ղաքաց ցամաք անուններն. մարդկային
ցեղի ոյլ և ոյլ բաժանմանց, նոցա
քաղաքակրթութեան աստիճանին եւ
աշխատութեանց ուսումն աւելի զը-
ւարձելի է. վերջապէս երկրագնախ
այլ և ոյլ մասանց սրտաբերութեան
եւ զանազան կենդանեաց համառօտ
նկարագիրն աւելի մանկական հասա-
կին յարմար է: Բայց յատախ, նկատե-
լով որ շատ անգամ ցամաք անուա-
նացուցութիւնը տաղալիութիւն կը
պատճառէ ուսանողներուն և եռանդը
կը մարէ, շատ համառօտ անցանք Քա-
ղաքական մասն ժիպն դիտաւոր քա-
ղաքներն գնելով, աշխարհներն կամ
տէրութիւններն եւս բնական բաժան-
մանց, կամ տաղանայ համեմատ դա-
սաւորեցինք գիրքսրմունքի առնելու
համար: Ուսումնական մասին մէջ ևս
նախընթաց երկու մասանց համառօ-
տութիւնը պահպանեցինք: Իսկ ամե-
նէն վերջը աւելցուցինք Հայաստանի
աշխարհագրութիւնը, զոր մեր մա-
նուկներն աւելի ընդարձակօրէն ուսա-
նիլ պարտաւոր են ՚ի կանուխ ժամա-
նակաց և կատարելապէս տեղեկանալ
իրենց հայրենեաց:

Բաւ համարելով սոյն փոքրիկ ծա-
նօթութիւնը դասագրքին վերայ, կը
յուշեցուց, որ Ս. Աթուոյս Տ. Ժո-
ղովց կողմէն Ուսումնական Խորհրդոյ
քննութեան յանձնուելով հաւանու-
թիւն գտած է սպագրութեան, ո-
րով կը յուսամք թէ՛ նոյն հաւանու-
թիւնն պիտի գտնէ աղգային վարժա-
րանաց մէջ իւր կիրառութեամբն, որ
մեր աշխատանոց միակ և ամենէն մեծ
վարձն կը համարիմք:

Տես երես 136 Դիւն կարգադրու է գրիկն. Ժո-
ճան. կարգադրու է ժամանակի: